այլ լուութեամբ եւ համբերութեամբ տանել յամենայնի մինչ ցաւարտումն դործոյն։

Հասին 'ի Կայսերանիստ քաղաքն Կոստանդինուպոլսեցի Պաղտասար եպիսկոպոս, Մատթէոս եւ Դիոնէսիոս վարդապետք՝ որպէս գրեցաք, բայց յամառնային եղանակի պատահեալ ինասակար օդոց 'ի ճանապարհի, անկան խոթ 'ի մահիճս. Պաղտասար եպիսկոպոս զկնի 17 աւուրց հանդեաւ 'ի Քրիստոս՝ կացեալ 'ի միաբանութեան ամս իբր 20 ամենայն հաւատարմութեամբ։ Եւ յԵրուսաղէմ եդին 'ի տեղի նորա 'ի պաշտօն Լուսարարութեան զաշակերտ նորին զՍիմէոն վարդապետ հեզաբարոյ. այլ երկոքեան գտին զառողջութիւն, և Մատթէոս վարդապետ 'ի նոյն ամի դարձաւ յԵրուսաղէմ եւ Դիոնէսիոս ստիպմամբ ազգին մնաց 'ի մայրաքաղաք անդ, մինչ 'ի վախճան դործոյն, զի ինքն հմուտ էր ամենայն հանդամանաց Աթոռոյն և Ս. Տեղեաց։

Նիստ Երկրորդ, (յ5 Օգոստոսի)։

Գնացին դարձեալ ըստ առաջնոյն Երեսփոխանք երկուց կողմանց՝ եւ յանդիման եղեն Դատաւորաց. ընթերցաւ ատենագրութիւնն՝ և բաղդատեցին զհրովարտակս Ցունաց ընդ արձանագրութեանց՝ և 'ի տեղիս ինչ գտաւ անհամաձայն, զի Ճինս բառն դարձուցեալ էին 'ի Հապէշ։ Ապա խնդրեցին 'ի Հայոց զհրովարտակս Սէլիմայ և որդւոյ նորա Սիւլէյմանայ, զի զնոսա եդեալ էին հիմն հաստատութեան, և նոքա մատուցին զօրինակս ինչ անվաւեր, և Ատեանն ոչ ընկալաւ զայնս. իբրեւ խնդրեցին Հայք հանել զայնս յարձանագրութեանց, սկսան խրոխտալ Ցոյնք՝ թէ քաջ գիտեմք զի Հայք ոչ հրովարտակ ունին և ոչ արձանագրութիւն, առ որս ասացին՝ դուք պահէք զհրովարտակս ձեր ստս 'ի Կոստանդինուպոլիս, իսկ մերքն պահին յԵրուսաղէմ. ապա մատուցին զպատճէն հրովարտակին գրեալ 'ի թուին Հիճրէթի \\ԷՌ, զորոյ արձանագրութիւնն յառաջագոյն ջնջեալ իսկ էին Ցոյնք, բայց տհաճութեամբ ընկալաւ ժողովն, զի իսկականն խնդրէին, ըստ օրինակի Ցունաց։ Զօրացեալ Ցունաց 'ի վերայ այսր՝ սկսան խիզախել եւ աղաղակել՝ լինել իրաւանց 'ի կողմն իւրեանց։